# ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

# PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

## HAIA-5

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

# ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

## ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

# ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

***Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ***

***Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA***

***Խմբագրական խորհուրդ***

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

***Editorial Board***

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

***Բենիկ Վարդանյան***
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

***Հենրիկ Դանիելյան***
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

***Լևոն Մկրտչյան***
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

***Արմինե Գաբրիելյան***
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

***Ռուզան Փալանջյան***
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

***Դիանա Միրիջանյան***
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

***Արսեն Հարությունյան***
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

***Նվարդ Վարդանյան***
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

***Սմբատ Հակոբյան***
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

***Նարինե Շամամյան***
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

***Հայարփի Մնանյան***
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

***Սամվել Ռամազյան***
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

***Հասմիկ Մարիկյան***
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

***Լուսինե Անգելուշ***
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

***Սալվինե Մարկոսյան***
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

***Մարիամ Մարիբեկյան***
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

***Յարութիւն Խաչատուրեան***
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

***Արման Մալոյան***
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

# I

# ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԳՏԱԾՈՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-76

***Արսեն Հարությունյան,*** *պ.գ.թ.*
*ՀԱԻ/ՄՄ*

# ՏԱԹԵԻԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սյունյաց ուշմիջնադարյան ճարտարապետության ինքնատիպ դրսևորումներից են անապատային համալիրները, որոնք կազմավորվել են հիմնականում 17-18-րդ դդ.: Նոր մենաստանների կառուցումը, բնականաբար, պայմանավորված էր Սյունիքում անապատական շարժման վերազարթոնքով, որի նախաձեռնողներն էին Երուսաղեմ ուխտի գնացած՝ Սաղմոսավանքի եպիսկոպոս Սարգիս պարոնտեր Արենեցին[1] և Տրապիզոնից ժամանած Կիրակոս քահանա Պոնտացին: Մեծանուն վարդապետ Մովսես Տաթևացու (կաթողիկոս՝ 1629–1633 թթ.) ուղղորդմամբ գալով Սյունիք՝ անապատական շարժման հայրերը նոր անապատը հիմնում են Տաթևի հռչակավոր վանքից ոչ հեռու՝ Որոտան գետի աջակողմում, Հալիձոր գյուղի հանդիպակաց բարձունքին:

Հալիձորի Հարանց կամ Տաթևի նախկին Մեծ անապատը, որը հայտնի էր նաև Սյունյաց Մեծ անապատ անվամբ, ցավոք երկար կյանք չունեցավ, քանզի մեծապես խարխլվեց Սյունյաց 1658 թ. երկրաշարժից: Կարճ ժամանակում նշանավոր հոգևոր ու գրչության կենտրոն դարձած անապատի միաբանությունը տեղափոխվում է: Հակոբ Դ. Ձուղայեցի (1655–1680) կաթողիկոսի նախաձեռնությամբ և վանահայր Արիստակես վարդապետ Տաթևացու հոգածությամբ նոր անապատ է հիմնվում ներկայիս Տաթևի Մեծ անապատի տեղում: Նորահիմն անապատը ևս, չզիջելով նախորդին, շատ շուտով հայտնի մենաստան է դառնում, որի հիմնադրման ու գործունեության մասին են վկայում ոչ միայն մատենագրական աղբյուրները՝ ի դեմս Ձաքարիա Ագուլեցու հաղորդումների, այլև հուշարձանախմբի որմերին ու տապանաքարերին պահպանված երկու տասնյակից ավելի վիմագրերը: Վերջիններիս համալիր քննությանն է նվիրված սույն ուսումնասիրությունը, քանզի դրանք ցայսօր ամբողջացված և հրատարակված չէին:

***Հիմնաբառեր՝*** Տաթևի Մեծ անապատ, Տաթևի վանք, Արիստակես վարդապետ Տաթևացի, միաբանություն, վիմագիր, տապանաքար, գավիթ-սրահ, գերեզմանոց:

## Ներածություն

Տաթևի վանքի վիմագրական ժառանգության ուսումնասիրման շրջանակում[2] 2018 թ. հուլիսի 25-ին վիմագրագիտական հետազոտություններ իրա-

---

1 Սարգիսը ծագումով պատմական Արագածոտնի Ամբերդ գավառի Արենի գյուղից էր, որը ներկայումս ավեր ու անմարդաբնակ է [Հակոբյան և այլք 1986, 422]:

2 2014–2015 թթ. Տաթևի վանքում, մասնավորապես հյուսիսային պարսպապատից բացվող մուտքի, արևելյան պարսպապատի, զանգակատան և երբեմնի գավիթ-սրահի մերձակայքում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի կողմից պեղումներ են իրականացվել (ղեկավար՝ Հուսիկ Մելքոնյան, անդամներ՝ Արսեն Հարությունյան, Դավիթ Դավթյան), որոնց արդյունքները վերջերս ենք հրատարակել [Melkonyan et al. 2017]: Պեղումներին զուգահեռ և հետագա տարիներին մեր կողմից իրականացվել են նաև վանքի և շրջակա հուշարձանների վիմագրագիտական հետազոտություններ, ընդօրինակվել է ավելի քան 120 անտիպ արձանագրություն:

կանացրինք Որոտանի գեղատեսիլ կիրճում՝ գետի աջափնյա հարթության վրա կառուցված Տաթևի Մեծ անապատում[3]: Ճարտարապետական առումով հոյակերտ այս համալիրը, ինչպես նկատել է ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանը, մոտ լինելով Տաթևի վանքին՝ «*մնացել է հոչակավոր հարևանի փառքի ստվերում, կարոտ ուսումնասիրության ու արժանի գնահատականի*»[4]: Անուշադրությունը դեպի այս համալիրը Մ. Հասրաթյանը պայմանավորում է նաև գրականության մեջ ձևավորված այն թյուր կարծիքով, թե իբր 17–18-րդ դդ. հայ ճարտարապետությունն ուսումնասիրության արժանի ստեղծագործություններ չունի[5]: Հիրավի, այդ տեսակետը կոտրեց Մ. Հասրաթյանը՝ իրականացնելով այս և մյուս համալիրների ճարտարապետության գիտական ուսումնասիրությունը:

Մեր հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ անապատի վիմագրական ժառանգությունը ևս ամբողջացված և պատշաճ ուսումնասիրված չէ: Այսպես, ընդօրինակված 17–19-րդ դդ. թվագրվող 21 վիմագրից 12-ն անտիպ էին, իսկ հրատարակվածները՝ սրբագրման և լրացման ենթակա: Նշենք, որ մենք չափագրել ենք նաև բոլոր կոթողային հուշարձանները, լուսանկարել ու գրչագրել արձանագրությունները: Մինչ բուն նյութին անցնելը՝ նախ համառոտ անդրադառնանք Տաթևի Մեծ անապատի և նրա վիմագրերի վերաբերյալ նախորդ ուսումնասիրողների աշխատություններին:

### Տաթևի Մեծ անապատը նախընթաց հրատարակություններում

Տաթևի Մեծ անապատը համառոտ հիշատակված է 19-րդ դ. տեղագրական բնույթի որոշ աշխատություններում: Առաջին վկայությունը Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի երկհատոր ուսումնասիրության երկրորդ հատորում է, որտեղ հեղինակը նկարագրում է անապատի հուշարձանախումբը, ունեցած երբեմնի փառքն ու անմխիթար վիճակը, քանզի «*....այսպիսի հրաշակերտ Անապատ մնացեալ կայ ամայի, որ երբեմն հանդիսարան էր միաբանից բազմաց և սկզբնապատճառ այլոց մենաստրանից....*»[6]: Վիմագրերի վերաբերյալ որևէ հիշատակություն Ջալալյանցը չի հաղորդում: Վկայակոչելով վերջինիս նկարագրությունը՝ Ղևոնդ Ալիշանը ևս վիմագրերի առնչությամբ լռում է՝ նշելով միայն, որ նոր անապատը հնի նմանությամբ կոչվել է Մեծ անապատ «*....իբր գլուխ և առաջին ամենայն անապատից, որք յայլևայլ գաւառս և աշխարհս Հայոց հիմնեցան, իսկ հին մեծ Անապատն կոչեցաւ այնուհետև Հարանց անապատ, ի յիշատակ նախասկիզբն հաստատողաց կրօնին*»[7]: 19-րդ դ. վերջին անապատի որպիսության մասին համառոտ տեղեկություններ է հաղորդում նաև Երվանդ Լալայանը, որը ևս, չանդրադառնալով վիմագրերին, միայն նշում է, որ անա-

[3] Ուսումնասիրություններ կատարելիս մեզ ուղեկցեցին Տաթև գյուղի բնակիչներ Սաղաթել Իսավերդյանն ու Վահագն Գևորգյանը:

[4] Հասրաթյան 1973, 19:

[5] Հասրաթյան 1973, 19–20:

[6] Ջալալեանց 1858, 305:

[7] Ալիշան 1893, 250:

պատն իբրև կալվածք ունի մեկ այգի, վանահայրը Խոսրով վարդապետն է, որը Գորիսում է բնակվում, իսկ վանքի պահպանությունը վստահված է մի գյուղացի ընտանիքի, որը բավարար ուշադրությամբ չի հետևում[8]:

Տաթևի Մեծ անապատի վիմագրերի հիշատակմամբ վաղագույն աշխատությունը Ս. Էջմիածնի միաբան Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանինն է, որը 1904 և 1911 թթ., ձեռագրեր ուսումնասիրելու և վանական-պաշտոնական գործունեություն ծավալելու նպատակով, եղել է այն ժամանակ էջմիածնապատկան Տաթևի, Հաղարծնի և Դադի վանքերում: Իր այցելությունների ընթացքում մեծանուն հոգևորականը ջանացել է ընդօրինակել նաև սրբավայրերի վիմագրերը[9]: Այսպես, 1904 թ. օգոստոսի 13-ին Մեսրոպ Մագիստրոսը եղել է Հալիձորի Հարանց և Տաթևի Մեծ անապատներում՝ ընդօրինակելով առաջինից 6, երկրորդից՝ 8 արձանագրություն: Տաթևի Մեծ անապատից առաջին անգամ 1938 թ. հրատարակված 8 վիմագրերը Մեսրոպ Մագիստրոսը ներկայացրել է հուշարձանի նկարագրությունից հետո՝ հերթական համարակալմամբ, նշելով արձանագրության տեղը և բնագրի տողերի սահմանները[10]:

Անվանի վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի աշխատասիրությամբ 1960 թ. հրատարակված «Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ) մատենաշարի 2-րդ պրակը նվիրված է Գորիսի, Սիսիանի և Կապանի շրջանների վիմական բնագրերին: Հատորի սկզբում վիմագրագետը ներկայացրել է Տաթևի վանքից և շրջակայքից 93 արձանագրություն, որոնցից մեկը Մեծ անապատի գավիթ-սրահի կառուցման 1743 թ. վիմագիրն է[11]: Ավելի վաղ այն հրատարակվել է նաև Մեսրոպ Մագիստրոսի ընթերցմամբ[12], սակայն մեզ անհայտ պատճառներով վերջինիս ոչ միայն 1938 թ. հրատարակած գիրքը, այլև 1918 թ. Տաթևի վիմագրերի առնչությամբ՝ «Արարատում» հրատարակած հոդվածը Ս. Բարխուդարյանը չի օգտագործել[13]:

Ներկա դարի սկզբներին Տաթևի Մեծ անապատից 7 վիմագիր է հրատարակել նաև վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը: 1966 թ. ի վեր շուրջ 40 տարի Վահանավանքի նշանավոր վանական համալիրը պեղած հնագետ-վիմագրագետն իր դաշտային հավաքչական աշխատանքների ընթացքում քանիցս եղել է նաև Տաթևի Մեծ անապատում, որին նաև Հարանց անապատ է կոչում՝ նույնացնելով Հալիձոր գյուղի հանդիպակաց Տաթևի նախկին Մեծ անապատի հետ: Վիմագրագետի դիպուկ բնորոշմամբ՝ անապատի վիմագրե-

8 Լալայեան 1898, 149–150:

9 Տէր-Մովսիսեան 1938, 3:

10 Տէր-Մովսիսեան 1938, 58. №159–165:

11 ԴՎՀ-2, 35, №67: Գավիթ-սրահի կառուցման վիմագիրը հետագայում վկայակոչել են նաև Մուրադ Հասրաթյանը [Հասրաթյան 1973, 21–22], իսկ վերջին տարիներին՝ Ս. Էջմիածնի հյուրընկալ Դավիթ սարկավագ Մովսեսյանը՝ առանց հավելյալ ծանոթագրությունների [Մովսեսյան 2017, 43]:

12 Տէր-Մովսիսեան 1938, 58, №159:

13 «Մեսրոպ եպիսկոպոս» ստորագրությամբ 1918-ին «Արարատում» հրատարակված Տաթևի վանքի և շրջակայքի 45 վիմագրերն ամփոփող հոդվածը վերջերս վերահրատարակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում [Տէր-Մովսիսեան 2010]:

րի գերակշիռ մասը հրատարակված չէ նաև ԴՀՎ 2-րդ պրակում, ուստի փորձել է լրացնել այդ բացը՝ վիմագրերը ներկայացնելով ըստ իրենց տեղի[14]:

## Անապատի հիմնադրումը և շինարարական վիմագրերը

Հարանց անապատի՝ 1658 թ. երկրաշարժից մեծապես վնասվելուց և մասամբ ավերվելուց մի քանի տարի անց միաբանությունը տեղափոխվում և հաստատվում է Տաթևի նորահիմն անապատում: Պատմագիր Առաքել Դավրիժեցին, նկարագրելով անապատի՝ երկրաշարժից կրած վնասները, գոհունակությամբ է փաստում, որ նախկին անապատը հիմնովին չավերվեց, այլ միայն «*....արևմտյան կողմն անապատին, պարիսպն և հիւրատունն, և ախօռք անասնոցն, և համբարանոցքն, և մասն ինչ ի սենեկէ եղբարցն, և արևմտեան կողմն մեծ եկեղեցւոյն՝ յեւրուստ կուսէ արևմտեան սեանցն, սոքա ամենեքեան աւերեցան*»[15]: Վանականների տեղափոխվելու և նոր անապատ կառուցելու մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 17-րդ դ. ճանապարհորդ, վաճառական Զաքարիա Ագուլեցին, ըստ որի՝ ինքը Տաթևի Մեծ անապատ է այցելել 1668 թ. հունիսի 6-ին, երբ տեղի վանահայրը Արիստակես վարդապետ Տաթևացին էր, որն ուներ 70 կրոնավոր, իսկ անապատի կենտրոնում գտնվող եկեղեցին դեռևս թերակատար էր, քանզի «*....առաջ ուրիշ տէղ ին բնակեալ.... տէղն խափարվեցավ, փլաւ.... եկին այս տէղս, նոր ըսկիսբն արարին, յիսար (պարիսպ – Ա. Հ.), խուց, եկեղեցին շինեցին: Այս Ը. (8) տարի այ, որ եկել ան այս տէղս*»[16]: Ագուլեցու այս բացառիկ հիշատակությունը կարելի է համարել Տաթևի Մեծ անապատի հաստատման գլխավոր վավերագիրը, որը հիմնավորվում և լրացվում է նաև տեղի վիմական սկզբնաղբյուրներով:

Տաթևի Մեծ անապատի ներկայիս համակառույցը բաղկացած է կենտրոնում վեր խոյացած Ս. Աստվածածին երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ եկեղեցուց, ավելի ուշ արևմտյան պատին կից կառուցված գավիթ-սրահից, հյուսիսային մուտքին կից փոքր գավիթ-դամբարանից, պարսպակից և ոչ պարսպակից շուրջ յոթ տասնյակ վանական խցերից, սեղանատնից, խոհանոցից և տնտեսական նշանակության այլ կառույցներից [նկ. 1]: Բնականաբար, համալիրի գլխավոր շինությունը Ս. Աստվածածին եկեղեցին է, որի արևմտյան մուտքի բարավորին պահպանվել է Հայոց ՌՃԺԲ., այսինքն՝ 1663 թվագիրը, ինչն, ըստ ամենայնի, վերաբերում է շինարարության մեկնարկին, քանի որ 1668 թ. իր այցելության ժամանակ Զաքարիա Ագուլեցին այն թերակատար էր տեսել:

1. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի բարավորին, 1 տող [նկ. 2].

Ի ԹՎ,ԻՆ, ՌՃԺԲ. (1663)[17]:

[14] Գրիգորյան 2009, 65–66:

[15] Դաւրիժեցի 1990, 224:

[16] Ագուլեցի 1938, 75–76:

[17] Տէր-Մովսիսեան 1938, 58, № 160:

Հետագայում կարմրով ներկված այս թվագիր հիշատակությունը Մուրադ Հասրաթյանը ևս համարում է եկեղեցու հիմնադրման տարեթիվը[18]:

Եկեղեցու և մի շարք այլ շինությունների կառուցման առնչությամբ սկզբնաղբյուրային արժեք ունի նաև անապատի հիմնադիր վանահայր Արիստակես վարդապետ Տաթևացու տապանագիրը, որտեղ նրան է վերագրված ոչ միայն եկեղեցու, այլև ժամանակամերձ մյուս շինությունների կառուցումը:

2. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,68 × 0,55 մ). Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց, հետագայում կառուցված գավիթ-սրահի ներսում, պահպանված երեք տապանաքարերից մեջտեղինն է: Քարի կենտրոնում քանդակված է խաչով պսակված վարդապետական գավազան, չափածո տապանագիրը ծածկում է քարի գրեթե ողջ մակերեսը, 6 տող [նկ. 3].



+ Ի ՅԱՅՍ Տ|Ա|Պ|Ա|Ն ՔՆԱ՚ՐԱՆԻ, ԿԱՅ՚ ՀԱՆԳՈՒՑԵ|Ա|Լ ՆՇԽԱՐՔ ՄԵԾԻ, ԱՐ|Ի|ՍՏ|Ա|Կ|Է|Ս / Վ|Ա|ՐԴ|Ա|Պ|Ե|ՏԻ՝ ԽՍՏ|Ա|ԿՐՕՆ ՃԳՆԱՒՈՐԻ, ԳՈԼՈՎ ՏԵՂԵԱՒ Տ|Ա|ԹԵՒ|Ա|ՑԻ, / ՄԵՆ|Ա|ՍՏ|Ա|ՆԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ, ԵԿ|Է|Ղ|Է|Ց-ՒՈՅՍ Կ|Ա|Տ|Ա|ՐՈՂԻ, / ԵՒ ՀԱՄՕՐԷՆՍ ՇԻՆՈՒԱԾԻ, ՅԵՐԿՐԱՒՈՐԱՅՍ ՓՈ/ ԽԵԱԼ ԼԻՆԻ, ԴԱՍԻԼ Ի Փ|Ա|ՌՄՆ ԱՋ|Ա|Կ|Ո|Ղ|ՄԻ, ՅԱՄԻ ՌՃԴ.-Ի (1104), / ՚ՅԻՆ՚Ն ԵՒ ՏԱՄՆ (19) ՆԵՐ ԹՈՒԻ (1674), ՅԻՇ|Ե|Յ|Է|Յ|Ք Ի ՔՍ[19]:

Տապանագրի առաջին հրատարակիչ Մեսրոպ Մագիստրոսն Արիստակես անձնանվան փոխարեն կարդացել է մեծիմաստ վարդապետ, իսկ թվականը՝ ՌՃԻ. (1671): Մյուս հրատարակիչ Գր. Գրիգորյանը թվականն ընդհանրապես ՌՃԴ., այսինքն՝ 1655 է կարդում, այն դեպքում, երբ անապատի եկեղեցու կառուցումը միևնույն Արիստակես վարդապետի հոգածությամբ, ինչպես տեսանք, սկսվել է 1660-ական թվականների սկզբներին: Վերջինիս մահվան և թաղման մասին ուշագրավ է դարձյալ Զաքարիա Ագուլեցու հաղորդումը, ըստ որի՝ Տաթևի Մեծ անապատի վանահայր Արիստակես վարդապետ Տաթևացին վախճանվել է Ագուլիսում՝ 1669 թ. դեկտեմբերի 15-ին, իսկ մարմինը տարել ու ամփոփել են իր իսկ կառուցած անապատում. առաջնորդի պաշտոնում նրան հաջորդել է Մովսես վարդապետ Խոտանանցին. «*Թվին ՌՃԺԸ. (1669) դեկտեմ-*

[18] Հասրաթյան 1973, 21:

[19] Տէր-Մովսիսեան 1938, 58, №161բ; Գրիգորյան 2009, 65–66:

*բերի ԺԵ.-ումն (15) Ագուլիս, որ Տաթևու կրօնաւորաց անապատին հայրն՝ Արիստակէս վարդապետն, այսօր առ Աստուած փոխեցաւ: Սուրբ մարմինն տարան Տաթև, իւր շինած անապատն, անդ թաղեցին: Սայ էր ի գեղջէն Տաթևու, սորայ տէղն նստաւ մէկ տարոյ յետ նայ Խոտրանեցի Մովսէս վարդապետը....»*[20]: Կարելի է ենթադրել, որ 1669 թ. վախճանված Արիստակես վարդապետի տապանաքարին արձանագրվել է ոչ թե մահվան, այլ տապանի տեղադրման՝ ՌՃՂ. (1104) և 19 հավելյալ, այսինքն՝ 1674 թվականը:

Շինարարական բովանդակության ժամանակագրորեն հաջորդ վիմագրերը համալիրի ներսի ոչ պարսպակից՝ Գ-աձև խմբի խցերից մի քանիսի մուտքերի վերնամասում, նեղ լուսամուտներին կից և ներսում պահպանված համառոտ հիշատակագրություններն են, որոնք անուղղակիորեն վկայում են դրանց կառուցման ժամանակի, նպաստավորողի, վանականի մասին:

3. ՎԱՆԱԿԱՆ ԽՈՒՑ. հյուսիսային պարսպապատին զուգահեռ, ձախից երկրորդ խցի մուտքի ճակատաքարին, 1 տող [նկ. 4].



ՅԻՇ|Ա|Տ|Ա|Կ Է ԽՈՒՑՍ ՂԱԶԱՐԻՆ:

Թերևս միևնույն Ղազարն է հիշատակված նաև կից խցի վիմագրում:

4. ՎԱՆԱԿԱՆ ԽՈՒՑ. նախորդին աջից կից խցի լուսամուտի աջակողմյան քարին, արտաքուստ, հինգ տող [նկ. 5].



ՅԻՇ|Ա|Տ|Ա|Կ Է / ԽՈՒՑՍ ՂԱԶԱՐ/ԻՆ,
ԹՎ|Ի|Ն Ռ/ՃԼԱ. (1682)[21]:

Վիմագրի առաջին հրատարակիչ Գր. Գրիգորյանի համոզմամբ՝ հիշատակված Ղազարը եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց թաղված Ղազար վարդապետ Նորաշինքեցին է, չնայած որ մահվան թվականը տապանագրում 1681 է.

[20] Ագուլեցի 1938, 87:

[21] Գրիգորյան 2009, 65:

5. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,68×0,65 մ). Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց, գավիթ-սրահի ներսում, աջից առաջինը: Քարի կենտրոնում խաչով պսակված վարդապետական գավազանն է, 4 տող [նկ. 6].



ԱՅՍ Է ՀԱՆԳԻ՛ՍՏ՝ ՆՈՐԱՇԻՆՔԵՑԻ / ՂԱ՛ԶԱ՛Ր ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, / ՚ԵՂ՚ԵԻ ՚ՓՈ՚ԽԵԱԼ ԿԵՆԱՑ ԱՍ/ՏԻ: ԹՎԻՆ ՌՃԼ. (1681) ԱՄԻ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ[22]:

Քարի կոտրվածքի, ապա սվաղով անփութորեն նորոգման արդյունքում որոշ գրեր վնասվել են: Ղազարն, ըստ ամենայնի, անապատի վանահայրերից է՝ ծագումով Սյունյաց Նորաշենիկ գյուղից, որը, կարծում ենք, Կապան քաղաքից ոչ հեռու՝ Աճանան գետի հովտում գտնվող Նորաշենիկ գյուղն է[23]:

Վանական խցերի մյուս երկու հիշատակագրությունները Г-աձև շարքի արևելյան պարսպապատին զուգահեռ հատվածում են:

6. ՎԱՆԱԿԱՆ ԽՈՒՑ. ձախից առաջին խցի ներսում, ձախակողմյան զույգ խորշերի ճակատաքարերին [նկ. 7ա, բ].



ԹՎԻՆ ՌՃԼԱ. (1682):
ՅԻՇ|Ա,Տ|Ա,Կ Է ԽՈՒՑՍ ԳՈՒԼՆԱԶԱՐԻՆ, / Ի ՎԱՅԵԼՈՒ|Մ,Ն ՅԱՐՈՒԹԻՒՆ|ԻՆ,:

Հիշատակված Գուլնազարին հակված ենք համարելու շինարարության մեկենաս, այսինքն՝ Գուլնազարի հոգածությամբ իրագործվել է խցի (միգուցե նաև խցերի) կառուցումը՝ ի վայելումն Հարություն ճգնավորի: Ջաքարիա Ագուլեցին հիշատակում է ոմն խոջա Գուլնազար Ագուլեցու, որը 1670–1671 թթ. վերակացու է կարգվել Ագուլիսի Վերին թաղի Ս. Քրիստափոր եկեղեցու վերականգնման աշխատանքներին[24]: Հիշյալ եկեղեցու հյուսիսային, հարավային և արևմտյան որմերին՝ նվիրատվությունների դիմաց ագուցված արձանագիր խաչքարերից մեկի վիմագրում վկայված են նաև նվիրատու պարոն Նահապե-

22 Տէր-Մովսիսեան 1938, 58, №161ա; Գրիգորյան 2009, 65:

23 Հակոբյան և այլք 1998, 20:

24 Ագուլեցի 1938, 96:

տի ծնողների՝ խոջա Գուլնազարի և Բեգսուլթանի անունները[25], իսկ Վերին Ագուլիսի Բեկի գերեզմանատան տապանագրերից մեկում հիշատակված է ննջեցյալի՝ Մելքումի որդի Գուլնազարի անունը՝ վախճանված Հայոց ՌՃԿԲ. (1713) թվականին[26]: Հավանական ենք կարծում Տաթևի Մեծ անապատի վիմագրում վկայված Գուլնազարի և Ագուլիսում գործած նույնանուն խոջայի՝ միևնույն անձը լինելու հանգամանքը: Այս և վերոհիշյալ հիշատակագրություններին կից թվագիրն անուղղակիորեն հաղորդում է նաև խցերի կառուցման ժամանակը, այսինքն՝ եթե Զաքարիա Ագուլեցու հաղորդմամբ Հարանց անապատի միաբանությունը 1660-ական թվականների սկզբներին տեղափոխվել և այստեղ կառուցել էր եկեղեցին, պարիսպն ու կից խցերը, ապա նույն խցերի ներքին՝ Գ-աձև շարքը կառուցվել է շուրջ քսան տարի անց, ինչը վկայում է անապատում վանական միաբանության ստվարացման մասին:

7. ՎԱՆԱԿԱՆ ԽՈՒՑ. միևնույն շարքի ձախից հինգերորդ խցի մուտքի ճակատակալ քարին, 2 տող [նկ. 8].




Յ(Ի)Շ(Ա)Տ(Ա)Կ Է ԽՈՒՑՍ ԴԱԻ/ՈՒԹԻՆ[27]:

Դաւութ (Դաւուտ) անվանաձևը Հր. Աճառյանը բացատրում է իբրև Դավիթ անվան արաբական տարբերակ, որը մեզանում հիշվում է 15-րդ դ.[28]:

Այս շարքի խցերից մեկի դիմաց դրված էր մի շինաքար՝ վրան անկանոն գրչությամբ. «1986 (՞), Ներսէս Տէր-Սարգսեան»:

1660-ական թվականներին բուն համալիրի հետ միաժամանակ կառուցված պարսպապատը նորոգվել է 1720 թ.:

8. ՊԱՐՍՊԱՊԱՏ. արևմտյան կողմում՝ արտաքուստ ագուցված քառանկյուն քարին, 3 տող [նկ. 9].

25 Այվազեան 2005, 73, № 47:

26 Այվազեան 2005, 114, № 449:

27 Գրիգորյան 2009, 65:

28 Աճառյան 1944, 62:

ՆԼՈՅԼՈԳՅՕՂ ՇԻՆՎԱԾԼՈՅՅՍ / ՂԼՈՅԻԿԼԱՅՍ ՎԼԱՅՐԴԼԱՅՊԼԵՅՏ, / Ի ՌՃԿԹ.-ԻՆ (1720):

Կցագրերով աչքի ընկնող արձանագրությունը 18-րդ դ. սկզբին պարսպապատի նորոգման մասին վկայող միակ հավաստի աղբյուրն է: Մ. Հասրաթյանը, վկայակոչելով արձանագրության բովանդակությունը, նշում է, որ շարվածքից էլ երևում է, որ պարիսպները 18-րդ դ. սկզբին ավելացվել են խցերի տանիքներից սկսած, նորոգվել են նաև անկյունների վերնահարկերը: Նորոգման թվականը Մ. Հասրաթյանը 1711 է կարդացել[29]:

18-րդ դ. կեսերին եկեղեցու արևմտյան պատին կից՝ ողջ լայնությամբ, կառուցվում է գավիթ-սրահ:

9. ԳԱՎԻԹ-ՍՐԱՀ. ներսում, Ս. Աստվածածին եկեղեցու մուտքի ձախակողմյան պատին, 10 տող [նկ. 10].



ՅԻՇԱՏԱԿ Է / ՄԵԼԻՔ ԵԿԱ/ՆԻՆ,
ՈՐ Ե. (5) ԹՈՒ/ՄԱՆ ՏՈՒԱՒ /
ԳԱՒԻԹՆ ՇԻՆ/ԵԼՈՅՆ,
ՈՐ ԳԼՈ/ԻԽՆ ՍՐԲԱՏԱՇ /
ՔԱՐԱՄՔ ՇԻ/ՆԷՅԻՆՔ: /
ՌՃՂԲ. (1743)[30]:

Համաձայն վիմագրի՝ գավթի կառուցման մեկենասը Արցախի Տող գյուղի նշանավոր տանուտեր, Դիզակի մելիքության հիմնադիր մելիք Եգանն է[31], որը հինգ թուման (այսինքն՝ 50.000 պարս. դինար) է նվիրաբերել գավթի կառուցման համար: Տող գյուղի Ս. Հովհաննես և Ս. Ստեփանոս եկեղեցիների մուտքերի բարավորներին պահպանված ժամանակամերձ վիմագրերից մեկը դարձյալ վկայում է մելիք Եգանի մեկենասությամբ եկեղեցու տանիքը նորոգելու մասին (1736 թ.)[32], իսկ մյուսը բովանդակում է մելիք Եգանի վախճանից (1744 թ.) հետո նրա որդու՝ մելիք Եսայու միջոցներով դարձյալ եկեղեցու տանիքի նորոգումը (1747 թ.)[33]:

Չնայած խնդրո առարկա վիմագրում հատկանշված չէ եկեղեցու տանիքը նորոգելու մասին, այդուհանդերձ կարծում ենք, որ տեղին է Մ. Հասրաթյանի համոզմունքը, թե հիշյալ վիմագիրը պարզում է նաև եկեղեցու տանիքը սրբա-

29 Հասրաթյան 1973, 22:

30 Տէր-Մովսիսեան 1938, 58, №159; ԴՎՀ-2, 35, №67 (առանց թվական); Հասրաթյան 1973, 21–22:

31 Ղույլան 2001, 30; Մաղալյան 2007, 201–205:

32 ԴՎՀ-5, 177, №632:

33 ԴՎՀ-5, 177, №628:

տաշ քարերով նորոգված լինելու փաստը[34]: Մ.Հասրաթյանի բնորոշմամբ՝ Տաթևի Մեծ անապատի գավիթն իր ակունքներն ունի Սյունյաց 9–11-րդ դդ. ճարտարապետության մեջ, ի դեմս Բղենո Նորավանքի արևմտյան սյունասրահի: Ըստ նրա՝ Տաթևի Մեծ անապատում գավթի կառուցումն ունեցել է զուտ մեմորիալ նշանակություն, ինչի ապացույցն այնտեղ եղած տապանաքարերն են[35]:

### Տապանագրերը

Տաթևի Մեծ անապատի վիմագրական ժառանգության անքակտելի մասն են նաև մեկ տասնյակից ավելի՝ 17–19-րդ դդ. տապանագրերը, որոնք փաստական տեղեկություններ են հաղորդում անապատի առաջնորդ-վանահայրերի և միաբանության անդամների մասին: Արդեն վերը նշեցինք, որ թաղումներ են արվել Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց, որտեղ հետագայում գավիթ է կառուցվել: Հավելենք, որ թաղումներ են արվել նաև եկեղեցու հյուսիսային մուտքի առջևում և, ընդհանրապես, հյուսիսային կողմում՝ մինչև աղբյուրն ընկած տարածքը, որը գերեզմանոց է ծառայել:

10–11. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային մուտքի աջ և ձախ նիստերին փորագրված են թերևս նույն մուտքի միջնամասում առկա հարթ ուղղանկյունաձև տապանաքարին փորագրելիք 8 և 6 տողերից հետևյալ վիմագրերը [նկ. 11–12].

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏԷՐ ՄԱՐ/ԿՈՍԻՆ, ՅՈՅԺ ՃԳՆԱԶԳԵԱՑ ԿԸ/ՐՕՆԱՒՈՐԻՆ, ՈՐ ԷՐ ՏԵՂԵԱՒ Ա/ԳՈՒԼԵՑԻ, ԱՄԱՒ ԲԱԶՄԱՒ ԱՍ/Տ ԿԵՑՈՂԻ, ԵՂԵՒ ՓՈԽԵ,Ա,Լ ԿԵՆԱՑ / ԱՍՏԻՍ, ԵԴԱՒ Ի ԴՐԱՆ ՍԲ ՏԱՃԱ/ՐԻՍ, ԹՎԻՆ Ռ. ԵՒ Ճ.-ԻՆ ԵՒ ԽԷ.-Ե/ՐՈՐԴԻՆ (1698), ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՄ. ԱՄԷՆ[36]:



Ո՛Վ ՀԱՅՐՔ ԵՒ ԵՂԲԱՐՔ, / ԱՂԱՉԵՄ ՋՁԵՋ ՕՐՀ/ՆԵԼ ՋԳԵՐԵՋՄԱՆ ՄԵ/ՂԱՎՐ ՄԱՐԿՈՍ ԵՒԵԹ Ք,Ա,Հ,ԼԱՆԱ,Յ/ԻՍ ԵՒ ԴՈՒՔ Ա,ԼԻՐ,Հ,ՆԵԱ,Լ ԼԻՆԻՔ Ի ՔԷ: ՋԱՅՍ ԽԱՉԵՐՍ ՕԾԵԱԼ Է[37]:

---

34 Հասրաթյան 1973, 22:

35 Հասրաթյան 1973, 94–95:

36 Տէր-Մովսիսեան 1938, 58, №164; Գրիգորյան 2009, 66:

37 Տէր-Մովսիսեան 1938, 58, №163; Գրիգորյան 2009, 66:

Առաջին արձանագրության հաղորդմամբ՝ ննջեցյալը ծագումով Ագուլիսից Մարկոս ճգնակյաց կրոնավորն է, որն անապատում երկար տարիներ է անցկացրել և պատիվ է ունեցել թաղվելու եկեղեցու հյուսիսային մուտքի դիմաց, որին կից, թերևս հենց 17-րդ դ. վերջին, քառանկյուն հատակագծով փոքր գմբեթավոր գավիթ-դամբարան է կառուցվել[38]: Երկրորդ վիմագիրը նախորդի տրամաբանական շարունակությունն է, որը Մարկոս վանականի գերեզմանն օրհնելու աղերս է՝ ուղղված տեղի սուրբ հայրերին ու եղբայրներին:

Հիշյալ գավիթ-դամբարանի արևմտյան մուտքի դիմաց, ինչպես վերը նշեցինք, 18–19-րդ դդ. թաղումներ են արվել: Գրեթե միատեսակ հարթ ուղղանկյունաձև տապանաքարերից ժամանակագրորեն վաղագույնը 1700 թվականից է.

12. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,65 × 0,57 մ). գավիթ-դամբարանի արևմտյան մուտքի դիմաց, քարի կենտրոնում հովվապետական գավազանն է, գիրը՝ 2 տող [նկ. 13].



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՐԱՏԱՂ/ՑԻ ՏՐ ԲԱՐՍԵՂԻՆ, ՌՃԽԹ. (1700):

Տեր Բարսեղը ծագումով ղարադաղցի է, թերևս՝ Պարսկահայաստանի Ղարադաղ գավառից կամ, միգուցե, Կապանից ոչ հեռու գտնվող Սևաքար գյուղից, որին նաև Ղարադաղ են կոչում[39]:

13. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,60 × 0,48 մ). նախորդի հարևանությամբ, անվարժ գրչությամբ, 4 տող [նկ. 14].



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲՆԱԲԱՆԻ ՅՈ/ՎԱՆՆԷՍ ԱՆԱՐԺԱՆԻ, ՍՈՒՏԱՆ/ՈՒՆ ՔԼԱՀԼԱՆԱՅԻ, ԳՈԼՈՎ ՏԵՂԵԱՒ ԱՂՈՒԷՐԵՑԻ, / ԹՎԼԻՆ, ՌՃԿԴ. (1715):

Միջնադարյան աղբյուրներում անհատներին բնորոշող անարժան, սուտանուն նվաստացուցիչ ածականներով բնութագրված Հովհաննես բնաբան, այսինքն՝ ճարտասան, հռետոր քահանան, թերևս, ծագումով Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառի Աղվերծ-Ըղվերծ գյուղից է:

14. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,52 × 0,53 մ). նախորդի հարևանությամբ, կենտրոնում հովվապետական գավազանն է, 2 տող [նկ. 15].

38 Հասրաթյան 1973, 95–96:

39 Հակոբյան և այլք 1991, 526:



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ + ՏՐ ՍԱՐԳԻՍ ՈՐԴԻ /
ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԹՎ.ԻՆ. ՌՄԱ. (1752):

Դատելով տապանագրից՝ ննջեցյալը տեր Սարգսի որդի Սարգիս վարդապետն է:

15. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,41 × 0,62 մ). նախորդի հարևանությամբ, գիրը՝ տեղ-տեղ վնասված ու մեծապես մաշված է, 3 տող [նկ. 16].

ԱՅՍ Է ՏԱՊ.Ա.Ն ՏԱԹԵՒԱ[1]/ՑԻ ԽԱԼԻՖԱՅ
ԵՐԵՄԻ.ԱՅ.ԻՆ, / + Ի ԹՎ.Ի.Ն ՌՄԻ. (1771):

Ննջեցյալը ծագումով տաթևացի խալիֆա, այսինքն՝ վարժապետ, ռաբունապետ Երեմիան է:

16. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,68 × 0,70 մ). գավիթ-սրահի ներսում՝ եկեղեցու մուտքի դիմաց առկա տապանաքարերից աջից երրորդն է: Կենտրոնում վարդապետական գավազանն է, գիրը՝ 4 տող [նկ. 17].



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԵՐՍԻՍԻ / ՃԳՆԱԶԳԵԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, / ՈՐԴԻ
ՊԵՏՐՈՍԻՆ, Ի ՑԵՂԷՆ / ԴԱԹԵՒԱՑԻ ՂԱԼԱՄԵՑՈՑ, ՌՄԺԴ. (1765)[40]:

Նախորդ երկու հրատարակիչներն արձանագրությունը վերծանել են բազմաթիվ տարընթերցումներով, ինչպես նաև բառերի ու տողերի աղավա-

[40] Տէր-Մովսիսեան 1938, 58, №162; Գրիգորյան 2009, 65:

ղումներով: Ինչեցյալը Պետրոսի որդի Ներսես ճգնակյաց վարդապետն է, որը ծագումով Տաթևի Ղալամանց հայտնի տոհմից է: Տաթևացի գյուղագիր Սեդրակ Պողոսյանը Տաթևի ավելի քան 90 տոհմանունների շարքում հիշատակում է նաև Ղալամանց տոհմը[41]:

17. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,30 × 0,35 × 0,30 մ). բակում, աղբյուրի հարևանությամբ, հյուսիսային նիստին, 3 տող [նկ. 18].



Ի 1889, ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂԱ/ՋԱՆԱՅ ՍԻՄԷՕՆԻ ՈՐԴ/Ի
ՏԻՐԱՑՈՒ Մ[Ե]ՅՍՐՕՓԻՆ:

Նմանատիպ բարձր, բայց ավելի փոքր 1907 թվակիր մի տապանաքարի վրա էլ նշմարելի էր ոմն Անդրեասի անունը:

Պարսպապատի հյուսիսային մուտքը հետագայում վերաշարվել-փակվել էր, իսկ ներկայումս այն՝ համալիրի գլխավոր մուտքն է, որի երկու կողմում՝ ուղղահայաց դիրքով իբրև շինաքար են օգտագործվել նեղ ուղղանկյունաձև զույգ տապանաքարերը:

18. ՏԱՊԱՆԱՔԱՐ. պարսպի հյուսիսային մուտքի աջ կողմում, 2 տող [նկ. 19].



ԱՊՈՎ ԾԱՌԱ ԱՅ Ի ԳԻ[Ի]ՂԷՆ ԿՈՐԻՍՈՒ, / Ի ԹՎԻՆ Ռ...

Ցավոք, թվականը ամբողջությամբ չի ընթերցվում վերադիր մեկ այլ քարի պատճառով: Ինչեցյալը գորիսեցի Աբովն է: Տապանաքարի ոճից, ինչպես նաև վիմագրի տառաձևերից դատելով՝ կարելի է թվագրել 17-րդ դարով:

19. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նախորդի դիմաց, 2 տող [նկ. 20].

41 Պողոսյան 2011, 120:

Այս է տ(ապ)ան / Մելքոնին:

Տրամաբանորեն նախ պետք է երկրորդ տողը կարդալ, ապա՝ առաջին: Տառաձևերն առավել բնորոշ են 19-րդ դարին:

20. ՏԱՊԱՆԱՔԱՐ (1,45 × 0,35 մ). պարսպապատից դուրս, համալիրի հարավարևմտյան թեք լանջին տարածվող միաբանական գերեզմանոցում, 4 տող [նկ. 21].



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ / ՏԷՐ ՊԱՂՏԱՍԱՐ / ՈՐԴԻ Ն(Ե)ՐՍԷՍ,
[ՆԵՐ/ՍԷՍ] ԹՎ(Ի)Ն( Յ) ՌՃՀԵ. (1726):

Ներսէս անվան երկրորդ հիշատակությունը համարում ենք գրչի վրիպակ:

Մեսրոպ Մագիստրոսն այս գերեզմանոցից հիշատակում է նաև ոմն Հովհաննես վարդապետի տապանագիրը՝ վախճանված Հայոց ՌՃԿԴ. (1715) թվականին[42]: Մենք այն տեղում չնկատեցինք:

21. ՋՐԱՂԱՑ. հուշարձանախմբից մոտ 50 մ հարավ-արևմուտք պահպանվել է ուղղանկյուն հատակագծով կիսավեր ջրաղացը, որի մուտքի ճակատակալ քարի նեղ նիստին ընթեռնելի է անվարժ գրչությամբ հետևյալ երկտող վիմագիրը [նկ. 22].



ՏՐ ՍԱՐԳԻՍ, ՄԷԼԻՔ ՔԱՐԱՄ/Ն + Ա(Ի)Յ ԱՏԻՄԷԼԻՔԻ ՈՒՍԴԱ:

Ըստ ամենայնի, նշված անձինք ջրաղացի կառուցման նախաձեռնողներն ու նպաստավորողներն են: Նրանցից տեր Սարգիսը, թերևս, Տաթևի վանքի կամ Մեծ անապատի հոգևոր սպասավորներից է, Քարամը մելիքական ծագում ունեցող մեկն է, որի անունն այլ աղբյուրներում գտնել չհաջողվեց, իսկ վերջում հիշատակված է *ռաբա*, այսինքն՝ վարպետ Ատիմելիքը կամ Ատիմելիքի հրավիրած վարպետը, որի անունը փորագրիչը չի նշել: Տառաձևերի հնագրական առանձնահատկություններից դատելով՝ գիրը բնորոշ է 19-րդ դ. երկրորդ կեսին:

42 Տէր-Մովսիսեան 1938, 58, № 165:

## Եզրահանգումներ

Ամփոփելով կատարած վիմագրագիտական քննությունը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

Տաթևի Մեծ անապատը հիմնադրվել է 1658 թ. երկրաշարժից հետո, ըստ ամենայնի՝ 1663–1669 թթ., կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու նախաձեռնությամբ և տեղի վանահայր Արիստակես վարդապետ Տաթևացու հոգածությամբ: Համալիրը գործել և նոր շինություններով է համալրվել նաև 18-րդ դ. առաջին կեսին՝ ի դեմս գավիթ-սրահի 1743 թ. կառուցման:

Մեկ տասնյակից ավելի տապանագրերի վերծանությունը պարզում է, որ անապատի միաբանությունը ստվարացել է 17-րդ դարի վերջին տասնամյակներից, որտեղ ճգնել ու սպասավորել են հիմնականում ծագումով Տաթևից և հարակից բնակավայրերից եկած վարդապետներ և այլ հոգևորականներ:

Ներկայացված վիմագիր նյութը (21 վիմագրից 12-ը հրատարակվում է առաջին անգամ), թերևս, այսքանով չի սպառվում, քանի որ հատկապես պարսպակից խցերի հյուսիսային և արևելյան շարքերը տեղ-տեղ լցված են հողի ստվար շերտով, որտեղ հնագիտական պեղումներն ու մասնագիտական ուսումնասիրություններն, անխոս, ցանկալի արդյունք են տալու:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Սկզբնաղբյուրներ

ԱԳՈՒԼԵՑԻ 1938
Ջաքարիա Ագուցելու օրագրությունը, Յերեվան, Արմֆան, 1938:

ԱԼԻՇԱՆ 1893
Հ. Ղևոնդ Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1893:

ԱՅՎԱԶԵԱՆ 2005
Այվազեան Ա.Ա., Նախիջևանի վիմագրական ժառանգութիւնը, հ. Բ., Ագուլիս, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2005:

ԴՎՀ-2
Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960:

ԴՎՀ-5
Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:

ԴԱՒՐԻԺԵՑԻ 1990
Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ Լ.Ա. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990:

ՋԱԼԱԼԵԱՆՑ 1858
Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ տեառն Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանց թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրէթի և այլոց, մասն Բ, ի տպարանի Ներսիսեան Հոգևոր դպրոցի Հայոց ընծայելոյ յԱզնուական աղայ Գէորգայ Արծրունւոյ, Տփխիս, 1858:

## Ուսումնասիրություններ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2009
Գրիգորյան Գ.Մ., Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից), Երևան, «Զանգակ-97», 2009:

ԼԱԼԱՅԵԱՆ 1898
Լալայեան Ե.Ա., Սիսիան. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար // «Ազգագրական հանդէս», գիրք Գ, Թիֆլիս, 1898, №1, 105–272:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1973
Հասրաթյան Մ.Մ., Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2019
Հարությունյան Ա.Է., Տաթևի Մեծ անապատի վիմագրերը // «Հնագիտություն, ազգագրանություն, բանագիտություն. միջգիտակարգային մոտեցումներ», ՀԱԻ երիտասարդ գիտնականների 16-րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, 20–22 նոյեմբերի, Երևան, «Ասողիկ», 40–42:

ՂՈՒԼՅԱՆ 2001
Ղուլյան Ա.Բ., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք IV, Երևան, «Գիտություն», 2001:

ՄԱՂԱԼՅԱՆ 2007
Մաղալյան Ա.Վ., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, «Գիտություն», 2007:

ՄՈՎՍԵՍՅԱՆ 2017
Մովսեսյան Դ.Ա., Տաթևի Հարանց Մեծ անապատը և նրա մշակութային ժառանգությունը, Ս. Էջմիածին, Հեղ. հրատ., 2017:

ՊՈՂՈՍՅԱՆ 2011
Պողոսյան Ս.Մ., Տաթևի համառոտ պատմություն, Երևան, «Զանգակ-97», 2011:

ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ 1938
Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինութիւնները, գրեց Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1938:

ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ 2010
Տէր-Մովսիսեան Մ.Վ., Արձանագրութիւններ Տաթևի վանքի և շրջակայքի, Յօդուածների ժողովածու, հրատ. պատրաստեցին՝ Գ. Տէր-Վարդանեան, Ս. Նահապետեան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2010, 279–297 (վերահրատարակված՝ «Արարատ», 1918, Դ-ԺԲ, 204–225):

MELKONYAN et al. 2017
Melkonyan H.A., Harutyunyan A.E., Davtyan D.H., Excavations at Tatev Monastery in 2014–2015 // Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, Vol. XI, Issue 1–2, Yerevan-Oxford, 305–320.

## Բառարաններ

ԱՃԱՌՅԱՆ 1944
Աճառյան Հ.Յ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1944:

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 1986, 1991, 1998
Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ս.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, 3, 4, Երևան, ԵՊՀ հրատ., 1986, 1991, 1998:

***Arsen E. Harutyunyan***
*Institute of Archaeology and Ethnography, Matenadaran*

## THE EPIGRAPHIC INHERITANCE OF METS ANAPAT OF TATEV

***Keywords***: Mets Hermitage of Tatev, Tatev monastery, congregation, epigraphic inscriptions, tombstone, narthex-hall, Archimandrite Aristakes Tatevatsi, cemetery.

The hermitage complexes (Halidzor, Tatev, Shinuhayr etc.) are remarkable manifestations of architecture of the Late Middle Ages in Syunik province of Armenia. One of them is Mets Anapat ("The Great Hermitage") of Tatev, which is relatively well-preserved. It is located in Vorotan Canyon, on the right bank of the same river, South-East from the Tatev monastery. It was founded at the beginning of the 1660s after the earthquake of 1658 that destroyed Harants Hermitage in Halidzor, or former Mets Hermitage of Tatev. The founder was Archimandrite Aristakes Tatevatsi who was buried next to the western wall of St. Astvatsatsin church, inside the narthex (gavit') built in 1743. The surrounding monastic cells were built at the end 1660s as well as in the 80s of the same century. In fact, from the day of foundation this hermitage had a large congregation, according to Zakaria Aguletsi - approximately 70 monks. More than 20 epigraphic inscriptions have been preserved on the walls of the complex, as well as on tombstones, providing reliable information about the foundation of the hermitage, construction and renovation works, fortification, and about the activity of monastic monks. Most of these inscriptions have not yet been decoded and published.

On the tympanum of the western entrance of St. Astvatsatsin church there is an inscription about the founding of the church in 1663, and to the left of the same entrance - about the construction of the narthex in 1743.

It should be noted that there are commemorative inscriptions on the tombstones of the 18th-19th centuries, preserved opposite the western entrance of the northern small narthex. According to these inscriptions monastic life in the hermitage continued in subsequent centuries.

***Арсен Эдуардович Арутюнян***
*Институт археологии и этнографии, Матенадаран*

## ЭПИГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ ТАТЕВСКОЙ БОЛЬШОЙ ПУСТЫНИ

***Ключевые слова***: Татевская Большая пустынь, Татевский монастырь, монашество, эпиграфические надписи, надгробие, притвор-зал, архимандрит Аристакес Татеваци, кладбище.

К числу самобытных проявлений позднесредневековой архитектуры Сюникской области относятся уединенные монастырские комплексы – пустыни (Алидзор, Татев, Шинуайр и др.), среди которых относительно хорошо сохранившейся является Татевская Большая пустынь (Мец Анапат), находящаяся в Воротанском ущелье на правом берегу р. Воротан, к юго-востоку от с. Татев. Она была основана в начале 1660-х годов после значительного повреждения от землетрясения 1658 года пустыни Аранц в Алидзоре, или прежней Татевской Большой пустыни. Отцом-основателем является архимандрит

Аристакес Татеваци, впоследствии погребенный в притворе, построенном в 1743 году у западной стены одной из церквей монастырского комплекса – Св. Богородицы. Близлежащие монашеские кельи, как и прилегающие к ограде, были построены в конце 1660-х, а также в 80-х годах того же века, что свидетельствует о том, что со дня своего основания пустынь имела многочисленную монашескую братию (согласно путевым записям купца Закарии Агулеци – около 70 священнослужителей). На постройках комплекса, а также на надгробиях сохранилось более 20 эпиграфических надписей, сообщающих достоверные сведения об основании пустыни, дальнейшем пополнении ее новыми постройками и ремонтных работах, ограждении, а также о членах братии. Бóльшая часть этих надписей до настоящего времени не была расшифрована и опубликована.

На тимпане западного входа церкви Св. Богородицы сохранилась надпись об основании церкви в 1663 году, а слева от того же входа – о постройке притвора в 1743 году.

Примечательны также памятные надписи на надгробиях XVIII-XIX веков, сохранившиеся напротив западного входа северного малого притвора, на основании которых можно утверждать, что монастырская жизнь в пустыни продолжалась и в последующие века.

Ներկայացվել է՝ 16.11.2022,
գրախոսվել է՝ 02.12.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

*Նկ. 1. Տաթևի Մեծ անապատի ընդհանուր տեսքը «Կոտրած խաչ» հուշարձանից (2018 թ.)*

*Նկ. 2. Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի թվագիրը*

*Նկ. 3. Արիստակես վրդ. Տաթևացու տապանաքարը (1674 թ.)*

*Նկ. 4. Ղազարի հիշատակագրությունը խցի մուտքի ճակատակալ քարին*

*Նկ. 5. Ղազարի հիշատակագրությունը խցի լուսամուտին կից քարին (1682 թ.)*

*Նկ. 6. Ղազար վրդ. Նորաշինքեցու գապանաքարը (1681 թ.)*

*Նկ. 7ա, բ. Գոլնազարի հիշատակագրությունը խցի ներսում (1682 թ.)*

*Նկ. 8. Դավութի հիշատակագրությունը խցի ճակատակալ քարին*

*Նկ. 9. Պարսպապատի նորոգման արձանագրությունը (1720 թ.)*

*Նկ. 10. Գավիթ-սրահի կառուցման արձանագրությունը (1743 թ.)*



*Նկ. 11. Մարկոս կրոնավոր Ագուլեցու փապանագիր-արձանագրությունը (1698 թ.)*

*Նկ. 12. Մարկոս Ագուլեցու արձանագրության շարունակությունը*

*Նկ. 13. Տեր Բարսեղի գեղեցիկ քարը (1700 թ.)*

*Նկ. 14. Հովհաննես բնաբան քահանայի տապանաքարը (1715 թ.)*

*Նկ. 15. Սարգիս վարդապետի տապանաքարը (1752 թ.)*

*Նկ. 16. Երեմիա խալիֆայի տապանաքարը (1771 թ.)*



*Նկ. 17. Ներսես վրդ. Տաթևացու փապանաքարը (1765 թ.)*

*Նկ. 18. Տիրացու Մեսրոպի փապանաքարը (1889 թ.)*

*Նկ. 19. Աբով Գորիսեցու փապանաքարը (17-րդ դ.)*

*Նկ. 20. Մելքոնի գրապանաքարը (19-րդ դ.)*

*Նկ. 21. Ներսեսի գրապանագիրը (1726 թ.)*

*Նկ. 22. Զրաղացի մուտքի ճակատակալ քարի արձանագրությունը (19-րդ դ.)*

# ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

**Անանյան Հայարփի Գուրգենի**
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

**Անգելուշ Լուսինե Միքայելի**
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

**Գաբրիելյան Արմինե Արարատի**
*պատմական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

**Դանիելյան Հենրիկ Ավագի**
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

**Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի**
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

**Հակոբյան Սմբատ Հակոբի**
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

**Հարությունյան Արսեն Էդուարդի**
*պատմական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

**Մալոյան Արման Մանուկի**
*պատմական գիտությունների թեկնածու*
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

**Մատիկյան Հասմիկ Համլետի**
*բանասիրական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

**Մարկոսյան Սալվինե Հակոբի**
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

**Միրիջանյան Դիաննա Հրաչյայի**
*պատմական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

**Մկրտչյան Լևոն Ալբերտի**
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

**Շամամյան Նարինե Ալբերտի**
*պատմական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

**Ռամազյան Սամվել Մարտունի**
*բանասիրական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

**Սարիբեկյան Մարիամ Գրիգորի**
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

**Վարդանյան Բենիկ Վարդանի**
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

**Վարդանյան Նվարդ Խաչատուրի**
*բանասիրական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

**Փալանջյան Ռուզան Սուրենի**
*պատմական գիտությունների թեկնածու*
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5